ՆՈՐ-ԴԱՐ

№ 151 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՏԱՐԻ Ուրբաթ 16 Սեպտեմբերի 1888 Ուրբաթ 16 Սեպտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 151

Տարեկան 10 բազբէք, վեց ամսոյ՝ 6 բազբէք, երեք ամսոյ՝ 3 բ. 50 կ., մէկ ամսոյ՝ 1 բ. 50 կ., հատուկ 5 կոպէկ։
Բաժանորդ գրուելու են Թիֆլիսում միայն ամբողջ տարուայ։

Խմբագրութիւնը Տաճկահայոց Տիփլիս. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուրբ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամանակ։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., տեղամասերի համար կրկնապատկի

«Նոր-Դար»-ի խմբագրութիւնը տեղափոխուած լինելով, խմբագրութեան պրպտենեան այժմ գտնուում է Բարօնական փողոցում, հետ. № 12 տանը։

Контора газеты «Норъ-Даръ» переведена на Баронскую улицу, д. № 12, рядомъ съ аптекой Цуринова, противъ почто-телеграфной конторы.

«Նոր-Դար»-ին ներկայ սեպտեմբերի 1-ից բաժանորդ են գրուում և վճարում են 4 բ. 75 կ.։ Բաժանորդ գրուել ցանկացողները ուղարկում են բաժանորդագինը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты «Норъ-Даръ»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— Վեհափառ Կաթողիկոսի գալուստը։ — Առաջնորդարան.—Մասամբ սերնդի կրթութեան գործը։ — Քրոնիկոն.—Լուրեր։ — Թղթակցութիւնները.—Գղ-Ալվազ։ Կ. Փոլիս։ — Քաղաքական.—Քաղաքական Լուրեր։ — Խառն Լուրեր։ — «Նոր-Դար»-ի հեռագիրները։ — «Նոր-Դար»-ի պատասխանները։ — Յայտարարութիւններ։

Երէկ, հինգշաբթի 15-ին սեպտեմբերի, կէս օրից յետոյ ժամը հինգ 3-ին արտակարգ առանձին գնացքով Թիֆլիս կայարանը ժամանեց Նորին Ծնութիւն Վեհափառ Կաթողիկոսը։ Խուռն բազմութիւն լցուած էր երկաթուղու կայարանը և Նրան չրջապատող հրապարակը և փողոցները՝ Վեհափառ Կաթողիկոսին դիմաւորելու համար։ Հենց որ գնացքը կանգ առաւ, մօտեցաւ վագոնին ոտիկանապետը Նորին Վեհափառութեան բարի գալուստ ցանկանալու. այնուհետև մօտեցաւ Թիֆլիսի քաղաքագլուխը՝ շրջապատուած քաղաքային վարչութեան ներկայացուցիչներով, Ներսիսեան դպրանոցի հոգաբարձուներով և այլ պաշտօնական և պատուաւոր քաղաքացիներով և քաղաքի կողմից ողջունեց Նորին Վեհափառութեան գալուստը։

Վեհափառը վագոնից վայր իջնելով շրջապատուած էր քաղաքիս համքարների ներկայացուցիչներով, որոնք բարձր կրում էին իրենց դրօշակները։ Մի փոքր հանգստանալուց յետոյ, Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց կառքը նըստել քաղաք մտնելու համար։ Զորս ձի էին քաշում Վեհափառի կառքը, որի առաջից ձիով գընում էին երկու քահանաներ, իսկ կառքի ետքից կանգնած էին կարմիր գգեստով կաթողիկոսական երկու շաքիրներ. Վեհափառ Կաթողիկոսի կառքին հետևում էին բազմաթիւ կառքեր։

Բազմութիւնից Մինքայէլեան փողոցի սովորական անցուդարձը առաւ ժամանակ դադարել էր և բացի հայ ժողովրդից և օտարները փողոց էին թափուել այդ իրենց համար անսովոր տեսարանին հանդիսատես լինելու։ Սմբողջ ճանապարհի վրայ Նորին Վեհափառութիւնը ժողովրդին օրհնելով, բարեհաճեց Ալէքսանդրեան այգու մօտ իջնել կառքից, որտեղ Թիֆլիսի հոգևորականութիւնը գլխաւորած, ընդունած կարգով սպասում էր ընդունելու իր Պետին։ Այդտեղից սկսուեցաւ լծափորը և ոտիկանութիւնը մեծ չանք, մինչև անդամ մարակներ էր գործ գնում խուռն ամբոխը կարգի մէջ պահելու համար։

Վանքի առաջ հիւղեցու բակում շարքով կանգնած էին մեր երկսեռ դպրոցների և Ներսիսեան դպրանոցի բոլոր ոտները։

Վեհափառը մտաւ վանքը և մի կարճ քարոզ խօսեց։ Այնուհետև ամբոխը կամաց կամաց սկսեց ցրուել։

Ինչպէս կանխաւ յայտնել էինք, Նորին Վեհափառութեան հետ Թիֆլիս ժամանեցին Թադէոս և Ազաթիրեան սրբազանները, նոյնպէս և արժ. Սահակ վարդապետ Բաղդասարեանը։

Երեկոյեան Վանքի բակն ու գանգակատունը լուսաւորած էին։

Թիֆլիս, 15 սեպտեմբերի 1888

ՄԱՍՏԱՂ ՍԵՐՆԴԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

—

Քաղաքիս զանազան կարգի և տգղի դպրոցները լիքն են աշակերտներով և աշակերտուհիներով, բայց և այնպէս մեծ է այն մանուկների թիւը, որոնք դպրոցներում տեղի պակասութեան պատճառով մնում են դուրսը առանց ուսումի, առանց տարրական կրթութեան, մեծ ցաւ պատճառելով իրենց ծնողներին։

Մի ժամանակ կար, որ կառավարութիւնն ինքն էր փող վճարում, որպէս զի ծնողները ուսմնարան, գիմնազիան տան իրենց զաւակներին, իսկ այժմ ծնողն է թէ վճարում են և թէ ազերսում, բայց գրանց զաւակները չեն ընդունւում։ Ինչու. դրա պատասխանը արդէն գիտենք. — տեղ չկայ, վախտս չկայ։

Բայց «տեղ չկայ» առարկութիւնը բաւական չէ, կրթութեան կարօտ սերնդի առաջ ուրիշ շատ արգելքներ, գժուարութիւններ են դրած, որոնց յաղթելը շատ քիչերին է աջողուում։

Յայտնի է, որ այժմս գիմնազիոններում աշակերտների ընդունելութիւնը ինչպիսի գժուարութիւնների հետ է կապուած։

Այս հանգամանքից օգտուելով մեր դպրոցների վարչութիւնները, պէտք է ասը, կարծում ենք, աւելի ընդարձակէին մեր դպրոցների դռները ուսումնասիրաբար հայ մանուկների առաջ և խորհէին կարելոյն չափ բազմաթիւ մանուկներին կրթութեան տալու մէջ ոգների վրայ։ Սրա հակառակ լսում ենք, որ մեր դպրոցներում աշակերտները ընդունելու գործը, տես խօսքը մէկ արած, այժմս աւելի գժուարացրել են։ Նոյն իսկ մեր Ներսիսեան հոգևոր դպրանոցում շատերին մերժել են «տեղ չլինելու» պատճառով, և աշակերտացուներից «կանդիդատներ» որոշելու նորութիւնն էլ մտցրել են։

Խօսք չունինք, որ մեր միակ նիւթականապէս լաւ ապահովուած Ներսիսեան դպրանոցը աշխատէ աւելի բարձր ուսում տալ իր սաներին բարձր դասատներ աւելացնելով։ Բայց գիտենք, որ այդ բարի ցանկութիւնը կը մնայ առայժմս լոկ ցանկութիւն, իսկ մեր ազգի առաջադիմութեան համար, ամենից աւելի հարկաւորը և նախապատելին այն է, որ տարրական կրթութիւնն ընդհանրանայ, տարածուի մեր ժողովրդի մէջ։

Այդ աշքի առաջ ունենալով, ամենից աւելի Ներսիսեան դպրանոցի վարչութեան պիտի լիներ ոչ թէ մէկ՝ այլ մի քանի դասընթաց նախակրթարաններ բանալ, քանի որ դրա համար տեղ մի քանի սենեակներ և ոչ թէ «տեղ չը կայ» ասելով փողոց ձգել տարրական ուսման կարօտ բազմաթիւ մանուկներին։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԼՕՌՈՒՑ.— Մարցայ եկեղեցական կալուածի մասին ասք. զանճարանի հետ ունեցած վէճը դեռ չէ վերջացած։ Ասղէն քանի տարի է, որ մնում է դա և երկու կողմից էլ վնասներ են ունենում։ Մարցայ կալուածների կառավարիչն է պ. Տ. Տէր-Դաւթեանցը, որ անձնուիրաբար աշխատում է կալուածների պահպանութեան մասին։ Պարոնը արժանի է շնորհակալութեան։ Հրաւիրում ենք հոգևոր կառավարութեան ուշադրութիւնն այն կալուածների վրայ. Թող որքան կարելի է չտապեցնեն գործի քննութեան վերջացնելը։

—

Խմբագրութիւնս պարտն է համարում Մելիք Բաբախանեանցից ստացաւ երեսունվեց (38 բ.) րուբլի, որ պարտը էին Նախիջևանում հաւաքել է Հանգուցեալ Բաֆիքին արձան կանգնեցնելու և նրա գրուածքները հրատարակելու համար։ Նուիրատուները են.

Ցիտանց և Մարիա 5 րուբլի, բժ. Պալովիան 5 բ., Մինքայէլ Մելիքեանց 5 բ., Սարգիս Սարգսեանց 4 բ., Լիպարիտ Մ. Բաբախանեանց 2 բ., Մկ. Սահակ Եպիսկոպոսեանց 2 բ., Ոմն Հայ 2 բ., Աբեթիս Պօղոսեան 2 բ., Խաչ. Տէր-Սարգսեան 1 բ., Կարապետ Պարպեան 1 բ., Ստեփան Կարապետեան 1 բ., Անտոն Թումանեան 1 բ., Աբրահամ Տէր-Յակովբեանց 1 բ., Ստեփան Գասպարեանց 1 բ., Սարգիս Տէր-Մինասեանց 1 բ., Նիկ. Չաքենազարեանց 1 բ., երկու անծանօթներ 1 բ., Կարապետ Օհանեան 1 բ., Ստեփան Քեռպալարով 1 բ., ընդ ամենը 38 րուբլի։

—

Ամերիկայում անցեալները հրատարակուեց Զենայիդա Իօգոլինայի մի պատմական երկասիրութիւնը «Աստեհանի պատմութիւնը» վերնագրով. եսկ այժմ էլ հրատարակուել է «Բաբելոնի և Պարսկաստանի պատմութիւնը» անունով մի ուրիշ երկասիրութիւն։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.— Այս տարի մեր գաւառում հունձը շատ անաջող անցաւ։ Չնայելով որ տեղ-տեղ խիստ առատութիւն էին խոստանում, բայց գարնանային ամիսներն իրենց յորդ անձրևներով և շարունակ չնչող հիւսիսային հողմը «ժանգ» առաջացրեց հացաբոյսերի մէջ, այդպիսով ցորենի արտադրութիւնը մեզանում բաւականացուցիչ չէ, դրա համար էլ մեր քաղաքի մի քանի առևտրականներ երեսանից ցորեն են բերել տալիս ու ծախում. չնայելով մի այդպիսի բարի ձեռնարկութեան, կրկին ցորենը բաւականի թանկ է ծախուում՝ համեմատելով մեր տարիներին, օրինակ ցորենի պուդը այժմ ծախուում է 1 րուբ. 20 կոպէկից մինչև 1 բ 40 կ., իսկ աւելը 1 բ. 40 կ.-ից մինչև 1 բ. 60 կոպ.։ Ինչպէս լսում է, լեռնային գիւղերում ցորենի առատութիւն է և մեզանից ժամանակ ցորենը ծախուում է 60 կ. մինչև 80 կ. պուդը։

—

ԱՂԴԱՇԻՑ.— Վատուց է, որ Ազգային հայ հասարակութիւնն չէր տեսել։ Այս տարի արժ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանցն այցելեց մեզ, որի այցելութիւնն զգալի օգուտ ունեցաւ։ Ինչպէս յայտնի է, Ազգային հայ գաղթականութեան գլխաւոր պատճառներից մէկը չուշեցի գեանչեցեան եղբայրների են եղել, որոնք տեղումս ունէին շինած մեծ քարվանսարաները և անոնք, ուր գետեղում են տեղիս թէ գատաստանական և թէ կառավարական հիմնարկութիւնները ու ծառայողները։ Այժմս Ազգային հայեր՝ եկած թէ առևտրի և թէ արհեստով պարապելու համար. բայց նրանք համարեա բոլորն էլ առանց բնակութեան են՝ գլխաւորապէս տեղումս և կիզեցի չլինելու պատճառով։

Ջատկի մատոյց մօրթելն է, որ դեռ մեզ լիշեցնում է մեր սովորութիւնները. բայց տարին մէկ անգամ կատարուող այդ ծէսերը կարող չէ տեղիս հայերի կրօնական պահանջներին բաւականութիւն տալ և նրանց կրօնական եռանդը վառ պահել, որ ղգալի կերպով պակսում է և դա հասկանալի է։ Թէև եղր. գիանջեցեանները խոստացել էին եկեղեցի էլ կառուցանել և դրա համար յատկացրել էին առանձին դրամ մօտ 25,000 բ., բայց հանգամանքներն արգելք են լինում դրան։ Բարեբախտաբար այժմեան գիանջեցեանցներից մէկը՝ Կարապետ ապէրը ստիպեց հանատատակս վճռել է մէկ եկեղեցի չլինել և նա դրական խոստումն է արել հայր վ.հանին։ Յարգելի Կարապետ ապէրը վճռել է մինչև ժամանակ եկեղեցին ապահովացնել՝ չլինելով նրա մօտ խանութներ և մէկ տուն ևս քահանայի համար։ Ահա մէկ գործ, որի իրագործմամբ մեր Ապէրը կարող է իւր յիշատակը յաւիտեան անմոռացնել և անմոռանալի անուն Թողնել տեղիս հասարակութեան մէջ։

—

Ներկայումս Հաջարիայի ամենախոր անկիւններում անգամ բանում են Ճանապարհներ շինելու վրայ։ Այդ աշխատութիւններից մանաւանդ ուշադրութիւն է դարձնում իւր վրայ Բաթումից խուլօ գիւղը տանող Ճանապարհը։ Ճանապարհային բոլոր աշխատանքն ընկած է գործերի վրայ, որոնք այդ աստիճ, մայրաքաղաքի Թերթերի ասելով, աւելի չափով պարշար են տառնում։

—

ԴԱՍԿԻՑ (Լօռի).—Մեր գիւղի ուսումնարանը բացուում է. կայերն արդէն վերջացել են և ամեն մի գիւղացի շտապում է իւր որդուն ուսմնարան ղնալու, որոնք առաջ չէին գնում՝ Թոշակ վճարել դժուարանալով։ Հրաւիրուած է Նորից ուսուցիչ պ. Թերոզնեանցը, որ ահա երկու տարի է արդէն լինչ ուսուցչութեան պաշտօն է վարում մեր գիւղում։

—

ՌԱՇՏԻՑ (Պարսկաստան).—Այս օրերս Թիֆլիսից սպասում ենք մեր նոր ուսուցչին, որովհետև հինը՝ պ. Կոս. Միքիմանեանցը տեղափոխած լինում տեղի տալ և հեռանալ մեր քաղաքից՝ երեք տարուայ պաշտօնավարութիւնից յետոյ։ Պէտք է խոստովանուել, պ. Միքիմանեանցը բաւական օգտակար եղաւ մեր հասարակութեան համար. նա լսչեմատանքով

կատարում էր իւր պաշտօնը, տալիս էր ներկայացումները ուսումնարանի և գրադարանի օգտին։

—Անցեալ օրեր տեղս հասան երկու հոգի դերասաններ, որոնք կարծում են, թէ Պարսկաստանում կկազդողանան մի օգուտ ունենալ։ Խարուսիկ յոյսեր։ Ցարգելի դերասաններն անձամբ փորձով ստուգեցին, որ այս տեղ ներկայացումներին չափազանց են առաւել Թուրքերը քան Հայերը։ Թէւրքերի համար դա մի Թամաշա է։ Բայց մեր դերասանները բացի չափարաղդ «ԿրԹ-ԿրԹ»-ից ոչինչ չունէին մատչելի պարսից ժողովրդին։ Դերասաններն հազիւ կարողացան իրենց համար Ճանապարհածախս գտնել Թէհրան գնալու համար, ուր նոյնպէս 15—20 օր մնալով՝ կգնան Թաւրիզ և այնտեղից Եւրոպա։ Լաւ կը լինէր, որ Պարսկաստան գալու դիտաւորութիւն ունեցող դերասանները լաւ մտածեն իրենց բռնած գործը։ —պարսիկ ժողովրդին հարկաւոր է «Թամաշա». ունի՞ն «Թամաշայի» բան՝ Թող գան, ունի՞ն պարսկերէն ասած «ըֆալէրտուաը»՝ գուցէ ալ ժողովրդին գտնին։

—

Խմբագրութիւնս ստացաւ Աւետ. Սահակ քահ. Սահակեանցի նոր աշխատութիւնները՝ 1) «Սրբազան պատմութիւնն Հին Ուխտի» (աշակերտների և աշակերտուհիների համար) Ա. Հատոր և 2) «Պատագիրք կրօնի» (Ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար՝ Հին-Ուխտի նիւթի մշակութիւնը) Ա. Հատոր։ Երկու գրքերն էլ հրատարակութիւն են «Թիֆլիսի ընկ. Հայերէն գրքերի հրատարակութեան»։ Սրբազան պատմութիւնը տպուած է հատ Թղթի վրայ № 12 տառերով և նշանակուած է աշակերտների համար և բաղկացած է 182 երեսից։ Այդ հատորի մէջ ամփոփուած է Հին-Ուխտի բովանդակութիւնը, որ «Թարգմանաբար, գրեթէ բառացի կերպով ծաղկաքաղ է արած Սուրբ գրքից՝ առանց որ և է դատողութեան կամ մեկնութեան»։ Երկրորդ գիրքը, որ տպուած է № 10 տառով և բաղկացած է 484 երեսից, նշանակուած է ուսուցիչների համար և բովանդակում է մանրամասն բացատրութիւն առաջին տարրական դասատանդութեան համար։ Այս գրքի հետ կայ նաև մի քանի կարտէզներ և պատկերներ ու նկարներ, որոնք աջողուած են և մեր ուսումնարանների մի մեծ կարիքը պիտի լցուցանեն՝ աշակերտներին առարկան դիւրըմբռնելի դարձնելու համար. այսպէս օրինակ, մի կարտէզ «Աբրահամից մինչև Մովսէս»։ մի կարտէզ՝ «Մովսէսից մինչև Յիսուս». նոյնպէս կան նկարներ՝ — «Ցամաքնստ ծառը, մանանան», «Վկայութեան խորանը», «Վկայութեան խորանի յատակագիծը». «Քահանայապետ». «Քահանայ», «Ցապանակ ուխտի», «Զոհի սեղան», «Խնկոց», «Սողոմոնի տաճարի ձակատը», «Սղ. տաճ. յատակագիծը», «Աւազան պղնձի», «Ոսկէ աշտանակ», «Առաջաւորաց սեղան». մի կարտէզ Պաղեստինի. Նկարները շատ մաքուր են։ Առհասարակ գրքերն տիպը լաւ է, բայց երկրորդ գրքի Թուղթը վատ է։ Ընկերութիւնը չը պէտք է զլանար մի քանի րուբլի էլ գրքի արտաքինի վրայ մսխելու համար։ Առաջին գրքի գինը 30 կոպէկ է, իսկ երկրորդինը՝ 1 ր. 75 կոպէկ։

—

Հին-Նախիջեւանից։—Մենք տառապում ենք... գոնէ տառապում է մեր երիտասարդութիւնը։ Այժմ առաջադիմութիւնը ղօշադութեան մէջ է։

Մօտ օրերս մի քանի երիտասարդներ իրենց Թուրք ընկերների հետ միացած, գիշերները չեն Թողնում մարդկանց մի յայտնի փողոցով անցնել, և եթէ մի տեղ գիշերը լսուում է մի ոհ և դղրդոց, իսկոյն գրանք փողոցի անկիւններից դուրս են յարձակուում ու բռնում մարդու օձիքից, սպառնալով սպանել նրանց... Թէ ինչ պատճառով, այդ դեռ յայտնի չէ։

Ինչպէս տեսնում ենք, մեր քաղաքի երիտասարդների մէջ խիստ տարածուած է մինչև դարերի «նդէալ-ներից» ամենաազնիւը։ Բայց ուշդ, որ երիտասարդների այդպէս ազնիւ վարմունքը շատ վատ հետևանքներ են ունենում ինչպէս իրենց երիտասարդների, նոյնպէս և անմեղ անցորդի համար։ Ինչպէս այդ եղաւ մօտերքս, որի մասին լսում ենք։ վատ էջը լինել, եթէ այդ բանի վրայ ուշադրութիւն դարձնէին քանի շուտ է, որպէս զի յետոյ «հանաքը՝ դագեանակ» չդառնայ։

—

ՋԱՒԹԱԼԱՑԻՑ.—Սգնախից 30 վերսաի չաի հետ գտնում է ցարսկի Կալօդցը կոչուած զօրավայրը, ուր այժմ հաւաքուած են բաւական Թուով զինուորներ։ Ամսիս 22-ին այդ զինուորները պէտք է ուղևորին Թիանէթ (Թէլաւին մօտ), ուր զօրքի մեծ բազմութիւն է ժողովուած։ Ցարսկի-Կալօդցում մշտական եղող զօրքն է 43-դ գրագունեան գունդը։

Այստեղ եկած էին 3 լուսանկարներ, որոնց մինն հրէայ է, որ վաղուց արդէն եկած էր, իսկ երկուսը հայ էին և յետոյ եկած։ Վերջինների գալուց յետոյ, տեղիս ոստիկանութեան մասի պաշտօնակատար մի հայ զինուորական Աւետվերդով ազգանունով իսկոյն յայտարարութեամբ յայտնում է լուսանկարներին, որ միայն տեսակ պատկերի մէկը 30 կոպէկով, իսկ մեծի մէկը 50 կոպէկով նկարեն։ Այս անտեղի կարգադրութիւնները տեսնելով հայ լուսանկարները հեռացան, իսկ հրէան մնաց... չգիտեմ ուրիշ տեղ էլ լուսանկարների համար «տակսա» կայ, Թէ հենց տեղիս հայ հերոսը մտածեց և հնարեց, իւր երաւունքը ցոյց տալու համար։ Ասում են, որ այդ պարոնը տեղական հայ վաճառականների հետ էլ միշտ կոպտութեամբ է վարուում, չնայելով, որ ինքն էլ Նուվելի մօտիկ մի գիւղացի է։

—Ջաթալայում ամեն բան հասարեա առատ է և էժան, միայն ածուխն է, որ չէ գտնուում, չգիտեմ անտառի շատ մօտիկութիւնից է Թէ լինչից։

—

Օդեսայում, անգլիական «Standard» Թերթի ասելով, կազմուել է ռուս-ֆրանսիական մի ընկերութիւն, որ մտադիր է ջրանցքով միացնել Սև ծովը Կասպից ծովի հետ։ Ջրանցքը փորելու համար (81 վերստ տարածութիւն) հաշուած է 40,000,000 րուբլի։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.— Քաղաքումս որպէս Թէ կամենում են «պլան» մացնել և այդ պատճառով էլ նոր շինող տների տէրերը պարտաւոր են երկրաչափին 30—40 րուբլ վճարելով յատակագիծ վերցնել իրենց տների համար ու Թողնել փողոցների լայնութեան համար կարևոր համարուած հողը իրենց սեպհական հողից։ Այդպէս էլ լինում էր, միայն չգիտենք ինչի Ռահիմ խանը, որի բաղնիքը գտնուում է քաղաքիս առաջին փողոցի վրայ, բացառութիւն է կազմում այդ բանում և նոր շինող բաղնիքի պատը, վոխանակ «պլանի» համեմատ ետ գնալու, մի քիչ էլ առաջ է քաշուել։

—Հին-Նախիջեւանում անցեալ տարի վաճառուեց քաղաքիս հարուստներից մէկը՝ Յովհ. Շահնազարեան, որի բարեկամները խոստացել էին մի հարիւր րուբլի յօգուտ տեղական դպրոցների։ Հանգուցեալի չհաստակը պատուելու համար, դպրոցում մի օր դաս չեղաւ, ուսուցիչներն իրենց աշակերտներով ու աշակերտուհիներով ներկայ եղան Թաղման հանդիսին։ Բայց ցաւն այն է, որ այդ գումարը մինչև այժմ չէ ստացուել և ինչպէս երևում է, չի էլ ստացուելու։ Հրաւիրում ենք հոգաբարձութեան ուշադրութիւնն այս տեսակ բաների վրայ։

—

Պետերբուրգի հոգևոր Ճեմարանի տեսուչը, տեղական Թերթերն ասելով, հաւաքուած ուսանողներին կարգադրել է սինոդի հրամանը, որ վերաբերում է ուսանողական դեռանքի բարեկեցութեան։ Այդ հրամանի զօրութեամբ ուսանողները զրկում են Ճեմարանից կամաւ հեռանալու իրաւունքից. աշակուրդ ցանկացողները պէտք է այդ մասին գրեն առանձին տետրակի մէջ՝ Ճիշդ նշանակելով արձակուրդի ժամը, որ որոշուած է մին. չև երեկոյեան ժամը 10-ը, իսկ չատ շատ մինչև 12 ը։ Տանը չգտնող ուսանողը, նոյնպէս և տեսչին չանդուգն խօսք ասող կամ օգնելից խմիչք գործածող ուսանողն արձակուում է։ Ուսանողական ընթերցարանն ոչնչացնում են։ Այդ պայմանները ծանր համարող ուսանողներին առաջարկուում է հեռանալ Ճեմարանից։

—

ԴՍԵղԻՑ.—Վերջին ժամանակներս լսուում յայտնուել է աւազակների մի խումբ, որի գլխաւորն է մի ինչ-որ «Շահվերդու տղայ»։ Մի երկու տեղ արդէն մարդ են Թալանել։ Ասում են, որ «Զոփուռի տղայ» Ղուկասը էլ նրանց հետ։ Սակայն այդ սխալ է. երկու տարի առաջ՝ երբ «Զոփուռի տղերքը» սպանուեցան, նրանց եղբայրը Ղուկասը անյայտացաւ և ոչ օր չմնացաւ Թէ նա ինչ եղաւ։ Այնուհետև նրա մասին ոտա և սիալ լուրեր էին տարածուում, իբր Թէ նա երևացել է և այլն, սակայն շատերը հնարադրում են, որ նա ևս մեռած է. վերջին հնարադրութիւնն աւելի հաւանական է, քանի որ նրան մինչև այժմ հաստատ տեսնող չէ եղել։

—

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Քաղաքի սեպհականութիւն եղած հողերն և կալուածները, մեր քաղաքապետի արիթաջանութեան շնորհիւ հետզհետէ դառնում են մասնաւոր անձերի սեպհականութիւն։ Բերենք մի քանի օրինակ. ա.) Ինչ երաւունքով Ռահիմ խանը դէպի Օղուրլար տանող Ճանապարհի երկու կողմում գտնուած հողերին, որ քաղաքինն են, տիրացել է և արդէն խանութների շինութեան հիմը ձգել. բ.) քաղաքային կշեռքի տակ գտնուած քաղաքային չարդախները, որոնք գտնում են Մերզա Խոսրովի խանութին կից, որով երաւամբ հետզհետէ խտանում են չիշեալ Մերզա Խոսրովի խանութին. գ.) Ղազար բուլղ կոչուած տեղը ով է տուել ալ. Գ. Ցէր-Բաղդասարեանին, որ նա այնտեղ երեն համար ջրաղաց է շինում... այսպիսի կորուստները շատ կարելի է Թուել։ Ինչի դեղձումների առաջը չեն առնում։ Սակայն ասած է՝ „աշխարհս գմակ է, գանակդ սրբի...»։

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ, 3/15 սեպտեմբերի («Նոր-Դար»-ի Թղթակից).—Երէկ Ազգ. ժողովն ի նիստ գումարուեցաւ և դրպետ երեսփոխանաց վաւերացման կնդրով. նորընտիր երեսփոխանք ներկայ էին և ամրողջին Թիւը կը չանգէր 50 ի։ Ովքը օրէն կը կատարուի պատրիարքական ընտրութիւնն, բայց Թէ ով կընտրուի պատրիարք առ այժմ կը մնայ մեզ անծանօթ, կան կուսակցութիւններ, ինչպէս երէկ յայտնի կերևէր, բայց նոքա աւելի անձերու կուսակից էին քան ազգին շահերը պաշտպանելու, ինչպէս կը գրէիք կարի իրաւամբ ձեր անցեալ Թերթերէ մերյն առաջնորդին մէջ։ Այս երևոյթը զարմանալի չէ մեզ, դի այսօր հազիւ մի քանի համբակ երե-

և վտանգ սպառնում փողոցի հակառակ կողմի խանութներին և «պատուելներին»։ փողոցի երկու կողմի հաղորդակցութիւնը կարուելու վրայ էր, երբ ջուրը փոքր ինչ հանդարտուեց. այդ միջոցին «մագազին» ներից ապրանքը դուրս էին տալիս և տանում փողոցի միւս կարգի խանութները. վերջինները միայն պատուաբնեցով ազատուեցան։ Թող երևակայեն նրանք, որոնք հետաքրքրուում են, թէ ինչ դրութեան մէջ և ինչ հետևանք կունենայ հում աղիսից չինած տներն ու խանութներն, երբ նրանք լիքն են ջրով. «է հարկէ կը փլչեն» կը պատասխանէ ամեն ոք։ Այդ պատճառով յայտնի վաճառական Մ. Ցէը Ոսկանեանցի պատուէրը փլուեց. իսկ նրա վրայի մագազինը, իւր զանազան ապրանքներով, նրա հետ Թաղուեց ջրի մէջ։ Պ. Ն. Թաղդանեանցի խանութների եռքով քաղած քարէ պատուարը, որ չինած էր յատուկ «սելի» առաջն առնելու համար, քանդեց, տարաւ, լցնելով նրա երկու մեծ «պատուարները», որոնք համարեա լիքն էին զանազան կահ-կարասիքներով. իսկ գլխի մագազինների ապրանքները տեղափոխեցին այլ խանութ, վախենալով փլչելուց, չնայելով՝ որ նա չինած է քարից ու կրից։ Երեք ուռւսի տներից մէկի հետքը չէ երևում, երկուսի կէսը քանդել տարել է։ Երկու բաղնիքներից մէկը բոլորովին կործանուած է համարեա, որի մէջ ջուրը հանդարտուելուց յետոյ, գտել են մի սատկած ուղտ, որ բերել է տարերից։ Ո՞ր մէկին ասեմ, ո՞ր մէկը Թողնեմ. եԹէ մի մի Թուելու լինեմ, շատ կ'երկարի մեր նամակը։ Ջրով լցուել է նաև «ուլտրաւենիայի» շինութիւնը։ Տներից ու խանութներից, լսելով, հանել քշել տարել է լիքը սանդուղներ ու կահ կարասիք։ Վնասը կարծեօք մեծ գումարի կը հասնի. բայց ներկայումս Ճշդապէս յայտնի չէ, Թէ որքան ապրանք է տարուած սելաւից, որովհետև պատուարները գեռ տիզմով լիքն է, նոյնպէս և ջրով։

Այսքանս այսպէս լինելուց յետոյ, երևաց, որ մարդի վնաս չէ եղել։ Այդ պատճառով ամենքն ասում են. «փառք Աստուծոյ, կրկին վտանգ Աստուծոյ, որ գիշերը չպատահից, Ցէրը մի արասցէ, եԹէ գիշերը պատահէր, մարդկանց պզտում չէր լինիլ»։ Ես աւելորդ չեմ համարում բնիկները մի նկատողութիւնն այստեղ յիշելու. ինչպէս ասում են նրանք, երբ հայերը և ռուսները սկսել են այժմեայ Ղզլ-Աղվախի տեղը չինութիւնները շինել, Թէքջանները ծիծաղել են նրանց միամտութեան վրայ. բայց հայերը և ռուսները կարծել են, Թէ նրանք այսպիսի շինութիւններ տեսած չլինելով զարմանում են....

Լ.

—

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ, 3/15 սեպտեմբերի («Նոր-Դար»-ի Թղթակից).—Երէկ Ազգ. ժողովն ի նիստ գումարուեցաւ և դրպետ երեսփոխանաց վաւերացման կնդրով. նորընտիր երեսփոխանք ներկայ էին և ամրողջին Թիւը կը չանգէր 50 ի։ Ովքը օրէն կը կատարուի պատրիարքական ընտրութիւնն, բայց Թէ ով կընտրուի պատրիարք առ այժմ կը մնայ մեզ անծանօթ, կան կուսակցութիւններ, ինչպէս երէկ յայտնի կերևէր, բայց նոքա աւելի անձերու կուսակից էին քան ազգին շահերը պաշտպանելու, ինչպէս կը գրէիք կարի իրաւամբ ձեր անցեալ Թերթերէ մերյն առաջնորդին մէջ։ Այս երևոյթը զարմանալի չէ մեզ, դի այսօր հազիւ մի քանի համբակ երե-

«ՀԱՅԿ-ՓՈՍՏ»-ի
ՀԱՐՈՒՍՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿ ՈՐՈՇՈՒՄՈՎ Ա. ՓՈՍՏԱՋԱՆԻ
Կ. ՓՕԼԻՍ, 14 աւգուստ (2 սեպտեմբեր).—
Մեր ՀԱՅ Բիւրօն Ոչինչ և Ոչ մի Տեղեկութիւն Չունի Պարոն Ա. Ա. Ոսկանեանի Մասին, Որ Ուղարկուած Էր Մեզ Ամերիկայից Մեր Թղթակցի Կողմից Ուղեգրելու Համար Մեր Ներկայ Ընդհանուր Ցոյցերը։ Ուստի Մենք Ստիպուած Ենք Հրաժարուել Նրա Ծառայութիւնից։
ՀԱՅԿ-ՓՈՍՏ»-ի
ՀԱՐՈՒՍՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՏԿ ՈՐՈՇՈՒՄՈՎ Ա. ՓՈՍՏԱՋԱՆԻ
Կ. ՓՕԼԻՍ, 14 աւգուստ (2 սեպտեմբեր).—
Մեր ՀԱՅ Բիւրօն Ոչինչ և Ոչ մի Տեղեկութիւն Չունի Պարոն Ա. Ա. Ոսկանեանի Մասին, Որ Ուղարկուած Էր Մեզ Ամերիկայից Մեր Թղթակցի Կողմից Ուղեգրելու Համար Մեր Ներկայ Ընդհանուր Ցոյցերը։ Ուստի Մենք Ստիպուած Ենք Հրաժարուել Նրա Ծառայութիւնից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ինչպէս Ամերիկայի Հայ Գաղթականութեան Մէջ Ընդհանրապէս, Այնպէս Էլ Մասնաւորապէս Կ. Փոլսի Մէջ Ամենաշատ Խօսուող Նիւթերից Մէկը Հանդիսանում Է Ազգային Ներկայ Դրութիւնը։ Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։ Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։

Ամերիկայի Հայ Գաղթականութեան Մէջ Ընդհանրապէս, Այնպէս Էլ Մասնաւորապէս Կ. Փոլսի Մէջ Ամենաշատ Խօսուող Նիւթերից Մէկը Հանդիսանում Է Ազգային Ներկայ Դրութիւնը։ Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։

Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։

Ամերիկայի Հայ Գաղթականութեան Մէջ Ընդհանրապէս, Այնպէս Էլ Մասնաւորապէս Կ. Փոլսի Մէջ Ամենաշատ Խօսուող Նիւթերից Մէկը Հանդիսանում Է Ազգային Ներկայ Դրութիւնը։ Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։

Ամէն Մարդ Ուզում Է Իմանալ, Թէ Ինչ Է Կատարւում Մեր Ազգի Ներսում, Ինչ Ուղղութիւն Է Տալիս Նրան Ներկայ Ժամանակը, Ինչ Ճանապարհով Է Նա Գնում Դէպի Ապագան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ինչպէս

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Շոգենաւային ընկերութիւն Բաքու-Ռոգեսայի և Կ. Պոլսի միջ։

—

Բաքուէն գնում է

Երեքշաբթիները.—Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մըտնում է Սուխումի և Նովոռոսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռոսսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտասահմանեան գնացքով Կ. Պոլիս։

Բաթումէ գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ Կերճի և Սուխումի վրայով։

Չորեքշաբթի — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, Կերչի և Նովոռոսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտը Կ. Պոլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ չոգենաւին մխանալու, որ մտնում էև Սուխում։

Ուրբաթ՝—Երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Ա.ւ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Րուսկէլան-Անատոլեան շրջանառու չոգենաւերին մխանալու։

Բաթումից գնում է Փոթի

Չորեքշաբթի և կիրակի օրերը.—Նաւի դուրս գնալու ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը Փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են Փոթի որոշեալ ժամանակներում երեքեակող ապրանքակիր-մարդակիր նաւեր *չորեքշաբթի* օրերը, լուսաբացին, և գնում են *ուրբաթ* առաւօտները։ Նիկոլաեւից Օդեսայի վրայով *շաբաթ* օրերը երեկոյեան Սեվաստօպոլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք Փոթի գալիս են *ուրբաթ* լուսաբացին և հեռանում է *շաբաթ* օրը երեկոյեան, վերադառնում է առանց բաթում մտնելու Սեվաստօպոլի և Օդեսայի վրայով գալիս է *չորեքշաբթի* երեկոյեան։

—

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երեքեակութիւնը պատերազմական-վիճակի ՀանդարտՀով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կաբէտը առաւօտեան ժամը 9-ին, Մէյթի կայարանում գիշերելով հասնում է Վլադիկավկազ մեւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդուռը կայարանում և Վլադիկավկազ հասնելով մեւս օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, մեւս օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու Վլադիկավկազ հասնում է մեւս օրը ժամը 8-ին երեկոյեան։

Վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կաբէտները դուրս են գալիս առաւօտ. ժամը 9-ին, գիշերում են Մէյթի կայարանում և մեւս օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պատանաուր կայարանում, մեւս օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս ցերեկը, ժամը 4-ին Ճաշից յետոյ, առանց գիշերելու՝ մեւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, մեւս օրը, երեկոյեան ժամը 9-ին հասնում են Թիֆլիս։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

երեքեակութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր
Սուրամ, ապ. մարս. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, » 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

PHOSPHATE DE FER
De LERAS, Docteur ès-sciences.
Դեղագործ Լըսայի
ՖՕՍՖԱԹ ԴԸ ՖԵՐԸ

Այս դեղն արիւնն և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղօրէկից ամենաազդուն է։ Ոչ պնդութիւն է պատճառում, ոչ ստամոքսն է յոգնեցնում և ոչ էլ ատամներն է սևացնում, մինչ մեծ աշխուժութեամբ բժշկում է կանանց սպիտակ հոսումը, ստամոքսի ցաւը, ժժգունութիւնը, արեան սակաւութիւնը, միով բանիւ ամեն հիւանդութիւնները, որոնց հետեւակայ են փափուկ կանայք և դեռատիթեղ աղջիկները և մանուկները, երբ ժժգոյն, անարիւն, թուլամորթ և անախորժ են։

Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։ Տ

(Մ.) գ 27—3

Առանձին հրատարակուեցաւ
„ԼԻՐ ԹԱԳԱՒՈՐ"
ԵՂԿՍպԻՐԻ ողբերգութիւնը
Թարգ. ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ
ԳԻՆԸ ՄԻԿ ՐՈՒԲԼԻ
Գումարով առնողներին զիջում։

Դիմել Թարգմանչին, С. Петербургъ, Литейный, 27.

3—1

Երևանցի Սիմէօն Բաբայեանն աւարտած լինելով հայոց եկեղեցական ձայնագրութեան արհեստը վկայականով, յանկանում է Զայնագրութեան ուսուցչի պաշտօն վարել մի որ և իցէ եկեղեցական դպրոցում և երգել եկեղեցում։ Յանկացողները կարող են դիմել իրեն՝ Երևան։

Լ. ՈՅՍ ՏԵՍԱԻ
Սամուէլ Սմալլս
ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ
Գերման. Թարգմ.
ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԳԻՆՆ Է 1 ր. 50 կ.

—

Նոյն Թարգմանչի

Շմխտե, Բենիամին Ֆրանկլին, 2 տիպ . . . . 40 կ.
— Գէօրգ Վաշինգտօն 2-տիպ . . . . 60 »
— Հոմերի Իլիականը, պատկերազարդ . 1 ր. 20 »
— Հոմերի Ոդիսականը, պատկերազարդ 1 ր. 50 »

(Ձանապարհի ծախքը Թարգմանչի վրայ է)։

Վաճառվում են Թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Марінно-Анановское училище.

№ 75

ԻՍԿԱԿԱՆ ԴԱՆԶԻ

Մատուռը, բարոյական ախտի և անբարոյականութեան զոհերի համար

ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ

Հեղ. գոհատը ԲԱՏԱՈՒԻ

Ուռաներէն հրատարակութիւնը երեք գծագիրներով է և գինը 1 րուբլի։

Թող այս գիրքը կարդայ ամեն ոք, որ վերոյիշեալ ախտն ունի. նա շատերին փրկել է յայտնի կորուստից։

1 ր. պահնջուած պէտ է ուղարկել հրատարակիչ Ր. Ֆ. Բիերէյէ Մագազինը Լայպցիգում՝ Verlags-Magazin in Leipzig։ (Հասցէն. R. F. Biereу's Verlags-Magasin in Leipzig).

(M) 50—29

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ
акушерки
С.З. ХИЗАНОВОЙ
Сололаки. Садовая ул., д. № 42.

ԾՆՆԴԲԵՐԱՆ
ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՕՖԻՈՒ ԽԻԶԱՆԵՆՑԻ
Սօլօլակի, Սալօվայա փողոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և Թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունվում են ջղներս, երկունքով բռնուածները (ցաւողները) և ծննդականները, որոնք խնամվում են յարմարեալ մանկաբարձի հսկողութեան տակ. տրվում է նրանց նաև սպասաւորին և կերակուր։

Ծննդի և ծննդին հետևորդ շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի։

X—16

ՀԱՐԿԱՒՈՐ Է

«Նոր-Դար»-ի խմբագրութեան համար ՅՐԻՉ-ԾՈՒՌԱՅ։

Պահանջվում է անցաթուղթ, դրաւական։ Պէտք է չրիչ-ծառան լինի ամուրի։

Յանկացողները թող դիմեն «Նոր-Դար»-ի խմբագրատան գրասենեակը, որ գտնվում է պօստհեռագրատան դիմաց, Ծուրինովի դեղատան մօտ։

Խնդրում եմ այն պարոններին, որոնք բաժանորդագրվեցին են ըստ տայել «Վիլեամ Զաննինգ» գրքի թարգմանութեանս համար, շատով վերադարձնեն ինձ, որովհետև լիշեալ աշխատութիւնն արդէն մամուլի տակ է։

Քամալեանց Սարգիս։

(Խ.) 5—2

ПАРФЮМЕРІЯ
ВЫСШАГО КАЧЕСТВА
А. СІУ и К°
МОСКВА.
НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(М.) 50—14

№ 10.

ԿԵՕԼԵՐԵԱՆ ՀՈՏԱԻԵՏ ՋՈՒՐ

Հազիւ լրէ ռուսական անուշահոտ նիւթերի արտադրութիւնները մինն այնքան մեծ հռչակ ստացած և յայտնի լինի, որքան իմ «անուշահոտ ջուրս»։ Բուրող իւղերի առատութիւնով, իւր չափաւոր գինովն իմ անուշահոտ ջուրս փոխարինում է գանազան օ-դը-կոլօննների, տուալէտի ջրերի և մինչև անգամ անուշահոտ օծանելիքների, ինչպէս թաշկինակների և հագուստների օծանելու, նոյնպէս և մարմինը քսելու և սենեակները և այլն սրսկելու համար։ Այդ ջրի հագուստների յատկութիւններից մէկին է, որ դիւրեկան և ամրացնող, բոլորովին բնական հոտը ժամանակի ընթացքում չի ձանձրացնում, ուստի և մի անգամ գործածողների համար անփոխարինելի պահանջ է դառնում։ Այդ ջրի հիմքը իւղմող բուրող իւղերի աղող մխուրդութիւնն՝ ազդում է Ճշմարիտ բուժիչ ներգործութիւնն, ինչպէս օրինակ, ջրերը թարմացնում և ամրացնում է, գարման է ուշագնացութեան, գլխացաւի և յոգերի։ «ԿԵՕԼԵՐԵԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՋՈՒՐ» առանձին անունը տուած է նրա համար, որ գանազանուի ինչպէս իսկական կեօլնի, նոյնպէս և ուրիշ ծագման օ-դը-կոլօննեներից (Eaux-de-Cologne)։

Վաճառվում է գլխաւոր բոլոր վոքր և չատ նշանաւոր առևտրականների մօտ, իսկ Մոսկվայում—

Ր. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկօլսկայա փողոցի վրայ։

(М. 46,227) 3—3

ՌՅԻՒՐԿ ՄԻՍՔՈՒ ՍՐԲՄԵՆՑ
ՍԱԼԻՄԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ
Նկարագիր
ՈՒԽՏԱԻՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ
Քաղմնիւ փոխոխութիւններով
Գինն է 50 կոպէկ
Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ք—37

ԲԺԻՇԿ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Ընդունում է հիւանդներին իւր բնակարանում. մասնաւորապէս բժշկում է մանկական և ներքին հիւանդութիւններ։ Ընդունելութիւնն է առաւօտեան ժամի 9—10, երեկոյեան 6—7-ը։

Կաւկիա, Ելիզաւետեան փողոց, տուն № 70.

5—3

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի հոգաբարձական խորհրդարանում սեպտեմբեր ամսի 21-ին լինելու է աճուրդ (առանց կրկնաճրդի) կապալով տալու Դպրոցի պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնւում են Ներսիսեան հին Դպրոցի հանդէպ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակից և տօներից՝ առաւօտեան 10—ից12 ժամն։

Հոգաբարձու Մ. Թամամշեանց։

Դործավար Բ. Հ.-Ջալալեանց։

3—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(որ գտնվում էր նախկին օդընտելական պարտէզում) Մուշտաիդի կողքին, պատուհաններ, դռներ, պատեր և այլն զարդարելու համար փշատներև և տերևաւոր բոյսերից դրասանդներ պատրաստելու պատուէրներ են ընդունվում։ Նոյն տեղը վաճառվում են նաև գանազան գալարիներ՝ բնակարաններ զարդարելու համար։

10—5

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ Ա.ՆԶԱ.ՆՑ ՀԱ.Մ.Ա.Ր
ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Աւետարանական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *ատեստատներ*։

Աւանդելի առարկաք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) դեղագրութիւն։ Ուսումը բացուելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 5-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերը հիմնուի բնակարանում, Սօլօլակում, Լաւրօտտօրնայա փողոցի վրայ, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻՍՊԵՍ եղբ. Ծովհաննովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնուի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնուղին։—въ Тифлисѣ. С. П. Манукьянцу.

Օգոստոսի 20-ից կուրսերը փոխադրելու են Աղէքսանդրի Պրիգոնովի տունը, № 9, Սերգիեվոլսկայա և Նադարնայա փողոցների անկեանը (գեղատան դիմաց)։

10—11

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Сентября 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова։